ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

31 հոկտեմբերի 2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Վանդաժի» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Վանդաժի» ՍՊ ընկերությունը 2022թ. սեպտեմբերի 29-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջների մասին:

Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2022թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումի թերությունները վերացվել են և որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2022թ. սեպտեմբերի 29-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վանդաժի» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2022թ. սեպտեմբերի 29-ին:

Թիվ ԵԴ/51047/02/22 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2022թ. դեկտեմբերի 2-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ